

# ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

## ԿՈՎԿՈՍԵԱՆ ՅՈՒՅԼԻՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻԼ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Անցեալ տարի, երբ մօտենում էր Վրաստանը Ռուսիալի հետ միանալու հարիւրամեակ տարեդարձը, թիֆլիզում մտածման առարկալ եղաւ այն հարցը՝ թէ ի՞նչ եղանակով տօնուի ալդ պատմական և մեր երկրի համար շատ մեծ նշանակութիւն ունեցող լօբելեանը. Եւ ի մի չի ալլոց արծարծուեց նաև այն չաջող միտքը, թէ հետաքրքրական կլինի տեսնել, թէ կովկասի ազգաբնակութիւնը որքան լառաջաղիմութիւն է արել ալդ հարիւր տարուալ ընթացքում. բայց ի՞նչ կերպով կարելի էր ցոլց տուլզանազան ազգութիւններից բաղկացած մի ամբողջ ժողովրդի քաղաքակրթական լառաջաղիմութիւնը, որ շատ բազմակողմանի տարրերից է կազմուած. Հարկաւ ցուցահանդէսը ամենից լաւ միջոցն էր արդ նպատակին հասնելու համար. երկրի և ժողովրդի գիւղատնտեսական և արդիւնարերական աստարիզում ցոլց տուած լառաջաղիմութիւնը կարող է ցոլց տալ և նորա քաղաքակրթեան աստիճանը.

Կովկասեան գիւղատնտեսական կալսերական ընկերութիւնը լանձն տաւաւ ալդ զդուար գործը ու կարճ ժամանակի ընթացքում կազմակերպեց ակովկասեան լօբելենական գիւղատնտեսական ու արդիւնաբերական ցուցահանդէսը, որ թէն իրեն շտապով կատառուած գործ՝ մեծ թերութիւններ ունեցաւ և մինչև անդամ նիւթական վնաս պատճառեց գիւղատնտեսական ընկերութեանը, այնուա մենախիւ սլարդ կերպով ցոլց տուեց. թէ որքան մեծ տարբերութիւն կալ կովկասեան ազգերի ալժմեան նիստ ու կացի, սովորութիւնների, պահանջների, դպրոցական գործի, գիւղատնտեսութեան և արդիւնաբերութեան ասպարիզում ցոլց տուած ջանքերի և սրանից հարիւր տարի առաջ զոլութիւն ունեցող նահապետական պարզ բարքերի ու երկրի և արդիւնքի մշակութեան դարրական եղանակների մէջ.

Բացի լիշեալ հարիւրամեակից, այս տարի լրանում էր նաև «Կովկասեան կալսերական գիւղատնտեսական ընկերութեան» գործութեան լիսն և մեսկը. ուստի և ընկերութեան զեկա-

վարներն ամեն ջանք ի գործ դրին՝ հասարակութեան առաջ պարզերես զուրս զալուս կազմուեց ցուցահանդէսը կազմակերպ պող վարչութիւն, որի պատուոյ նախադան եղաւ Նրկրիս կառավարչապես իշխան Գալիցինը. իսկ զվարաւոր վարչութեան նախադան եղաւ իշխան Պ. Գրուզինսկին, Կոմիկասեան կալսերական գիւղատնտեսական ընկերութեան փոխնախադահը. Ցուցահանդիս կօմիսար ընտրուեց իշխան Անդրօնիկովը. իսկ ամբողջ ցուցահանդէսն իւր բարձր հովանաւորութեան ներքու առաւ Նորին Կամսերական Մեծութիւն մնձ իշխան Միխա-լիլ-Նիկոլայինը-Կովկասի նախակին փոխարքան:

Ցուցահանդէսը պաշտօնապէս բացւուեց սեպտեմբերի 1-ին և մինչև նոյեմբերի մէկը ունեցաւ մօտ 160,000 ալցելու. ալսթիւն աւելի մնձ կիրնէր, եթէ Թիֆլիզում ալդ միջոցներին անձրեալին ու վաս եղանակ չիրնէր.

Ցուցահանդէսը բազկացած էր հետեւեալ 18 դիմաւոր բաժանմունքներից. 1) երկրագործութիւն, 2) դինեղործութիւն, 3) ալղեգործութիւն և բանչարեղէնի մշակութիւն 4) պատուշների մշակութիւն, 5) զարդի տեղ ծառալող բարսեր, 6) անտառապահութիւն, 7) ընտանի կենդաններ, 8) կաթնատնտեսութեան և կինդանապահութեան արդիւնքներ, 9) շերամապահութիւն ու մեղուապահութիւն. 10) ձկան արդիւնքներութիւնը և որսորդութիւն. 11) երկրագործական գործիքներ և մեղնաներ, 12) տնալին և արհեստների արդիւնքներութիւն, 13) գործարանական արդիւնքներութիւն, 14) լեռնապին, 15) մանկավաճական—արհեստգործական, 16) գյաւական-ստատիստիկական, 17) գիտական զարոցական և 18) զեղարուեստական. Ի ցուց կարող էին դրուիլ միմիացն կովկասեան երկների արտադրութիւնները.

Ցուցահանդէսի փատեալ շէնքը կառուցուեց ալղեպահնութեան դպրոցին կից գետնի վրայ ու մասամբ էլ նոյն իսկ ալդ դպրոցի ազում. համարեամ թէ բոլոր բաժանմունքներն էլ զետևուած էին զիս աւոր մնձ շէնքի մէջ. շէնքից դուրսն էին Թիֆլիզ ու Բագու քաղաքների սրանները, զարոցական վարչութեան սրանը, Բագու նախադան և բարձրական սրբական սրանը, Բագու պահորաման, մի քանի մասնաւոր արդիւնքների որի սրաններ և ալլն.

Ամենից հարուստ բաժինը հարկա երկագործականն էր, որուինեւան կովկասեան երկրների աղջաբրնակութեան աշքի ընկնուող մնամասնութիւնը երկրագործութեամբ է պարապում. ալսքաժինը դասակարգերի էր բաժանուած ըստ նահանգների և ամենից ծոխը Նրսանեան նահանգինն էր Հացահատիկների մշակութիւնը և գորան վերաբերեալ գործիքները՝ թէ էին ասիական և թէ զիսաւորապէս նոր-նւրոպական, աշքի էին լնկնում. իրենց բազմութեամբ. հնձելու, կալսելու մեքենաները ու նոր ձեր զութանները կամաց-կամաց տարածուում են մերերկրում. և մեր պահպանողական գիւղացիները հետզինետէ հա-

մովում են, որ դրանց գործածութիւնն առաւել ձեռնտու է, քան իրանց հասղարեան գործիքները.

Հանդէս բերուած մնացանակ ու բազմատեսակ գինիների և ընտիր ընտիր պատուհների տեսակներն ապացուց են՝ թէ վերջին ժամանակները մեր ալղեղործները մեծ ջանք են գործ դնում աղնատացներու պատղաքեր ծառերի տեսակները.

Տնակնագործութեան արդիւնքներից թէև շատ բան չկար ցուցահանդէսում, բայց եղածներն էլ ցուց էին տալիս՝ թէ մեր երկրի մը քանի մասերում ո՞ր քան նույրը գործուածքներ են կարողանում արդիւնաբերել՝ ամենաղարդ և հասարակ գործիքներով:

Կպրոցտական արհեստիտական բաժանմունքում ալնքան Դեղուածք էր, որ ղժուարութեամբ էր կարելի լինում մանրամասն գիտողութեան ենթարկել ի ցուց դրուած աշակերտական աշխատանքի արդիւնք իրավունքները բայց և ալնպէս մի քանի արհեստաւորաց և կար ու ճնի զպրոցների արդիւնքները լաւ տապաւորութիւն էին թողնում ալղելովի վրայ, Տարարազդաբար պէտք է նկատենք, որ ոչ Գէորգեան ճեմարանը, ոչ Ներսիստեան դպրանոցը և ոչ էլ մեր միւս թեմական զբարանները ոչինչ չէին ուղարկել ցուցահանդէս. ս. Էջմիածնի տպարանն ու հաշակաւոր մատենադարանն էլ ոչինչ չէին գրտել ի ցուց գնելու և հածարակութեան ցուց տալու իրանց գործիւնը:

Ազերլուն պարզ և ամփոփ գաղափար էր կազմում նաև հաջուկ նաւթի արդիւնաբերութեան վրա. նաւթի վիշկան, նաւթի հօր փորելու, նաւթ հանելու գործիքներն ու գործութիւնները բաղու չտեսնողին էլ լաւ գաղափար էին տալիս.

Հանքալին ոչ շատ ճոխ ժողովածուները ցուց էին տալիս մեր երկրի հանքաէն հարստութիւնը. քարածուխը, մարմարի տեսակները, սղիննը, աղը և ալլն հետզետէ պէտք է մեր անհող մնացած գլուխան դասակարգին ապրուսի միջոց տան, ինչպէս որ այժմ տալիս է նաւթի արդիւնաբերութիւնը.

I. Գեղարուստական բաժինը նույնպէս աղքատ էր. սղածների մէջ աչքի էին ընկնումնաև վարդգէս Սուրեննանցի մը քանի համարական կեանքից նկարած լաջող պատկերները.

II. Յօրինենական ցուցանաւդէսի ամենամեծ թերութիւններից մէկն էր աղդագրական նիւթերի ու տիպերի բացակալութիւնը. եղածն անքան քիչ էր, որ օտարը զրանով երբէք դադափար չէր կարող կազմել կողկասի բազմաթիւ ազգութիւնների ու նրանց կենցաղի մասին.

Չնալելով իւր թերութիւններին, կովկասեան լորելինական ցուցահանդէսը մը, որոշ պատկեր տուեց մեր երկրի տընտեսական ու արդիւնաբերական զարգացման և ցուց տուեց, որ Կովկասեան աղգերի մէջ առաջնակարգ տեղ են բռնոււ համբը. ցուցահանդէսի առաջնակարգ մրցանակների մի խոշոր մասը ստացան և ալերը.